

ABC123456789_2CFB0-34-5-D-B-000006
123456QG1-ABC-02/02/2020



XX/XX/XXXX



JOHN SAMPLE 1234
SAMPLE STREET
ANYTOWN CA 90000

Medi-Cal-ի հարգելի՛ անդամ,

Սկսած **2026 թ. հուլիսի 1-ից**, Medi-Cal-ը կդադարեցնի ապահովագրել որոշ մեծահասակ անդամների ատամնաբուժական ծառայությունները, բացառությամբ արտակարգ դեպքերի: Այս փոփոխությունը պայմանավորված է ներգաղթային կարգավիճակով: Փոփոխությունը վերաբերում է միայն 19 տարեկան և ավելի մեծ Medi-Cal-ի անդամներին, որոնք չեն համապատասխանում դաշնային լիարժեք Medi-Cal ծրագրի պահանջներին:

Պարզելու համար, թե արդյոք փոփոխությունը վերաբերում է Ձեզ, կարդացե՛ք Immigration Status Chart <https://www.dhcs.ca.gov/Medi-Cal/Pages/immigration-status-categories.aspx> կայքում:

Դուք կպահպանեք լիարժեք Medi-Cal-ի՝ ատամնաբուժական նպաստները՝ անկախ Ձեր ներգաղթային կարգավիճակից, եթե.

- Դուք հղի եք (և հղիության ավարտից հետո մինչև մեկ տարի) կամ
- Ձեր 19 տարին չի լրացել կամ
- Ձեր 26 տարին չի լրացել, և Ձեր 18-րդ տարեդարձի օրը խնամատարության տակ եք եղել

Եթե Դուք չեք համապատասխանում Medi-Cal-ի լիարժեք ատամնաբուժական նպաստների ծրագրին, կարող եք ստանալ շտապ ատամնաբուժական ծառայություններ:

Որո՞նք են շտապ ատամնաբուժական ծառայությունները:

Շտապ ատամնաբուժական ծառայություններն այն բուժումներն են, որոնք անհրաժեշտ են անմիջապես ուժեղ ցավը դադարեցնելու կամ հանկարծակի առաջացած լուրջ բժշկական խնդիրներն ախտորոշելու և բուժելու համար: Շտապ ատամնաբուժական ծառայությունները կարող են լինել հետևյալի համար.



- Արյունահոսություն, որը չի դադարում
- Ցավոտ այտուց բերանի մեջ կամ շուրջը
- Ատամի կամ ծնոտի ցավ
- Վնասվածքներ Ձեր դեմքին կամ ծնոտին
- Լնդերի կամ ատամների վարակ՝ ցավով կամ այտուցով
- Հետվիրահատական խնամք (օրինակ՝ վիրակապի փոխարինում կամ կարերի հեռացում)
- Կոտրված կամ դուրս եկած ատամ
- Բրեկետների մեջ մետաղալարերի կտրում կամ ամրացում, որոնք վնասում են այտերը կամ լնդերը

Շտապ ատամնաբուժական ծառայությունների մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ <https://smilecalifornia.org/common-questions-2/what-should-i-do-if-i-have-a-dental-emergency/> կայքեջ:

Ի՞նչ պետք է իմանամ:

- Եթե այս փոփոխությունն ազդում է Ձեր վրա, Դուք կարող եք օգտվել Medi-Cal ատամնաբուժական նպաստներից մինչև **2026 թ. հունիսի 30-ը**: Սկսած 2026 թ. հուլիսի 1-ից, Դուք այլևս չեք ունենա ամբողջական ատամնաբուժական նպաստներ և, հնարավոր է, որ ապանդամագրվեք Ձեր Medi-Cal Ատամնաբուժական ծրագրից (Ատամնաբուժական կառավարվող խնամքի ծրագիր):
- Եթե ունեք ատամնաբուժական արտակարգ իրավիճակ, կարող եք դիմել Medi-Cal-ի ատամնաբուժական մատակարարի՝ խնամք ստանալու համար:
- Ձեր մոտակայքում Medi-Cal-ի ատամնաբույժ գտնելու համար այցելեք <https://dental.dhcs.ca.gov/find-a-dentist/home>: Կամ զանգահարեք Medi-Cal-ի Ատամնաբուժական ծառայություն՝ **1-800-322-6384** հեռախոսահամարով:
- Medi-Cal-ի Ատամնաբուժական ծառայության մասին ավելին իմանալու համար այցելեք <https://smilecalifornia.org/> կայքեջ:
- Եթե Ձեր ներգաղթային կարգավիճակը փոխվի, կապվեք Ձեր տեղական վարչաշրջանի Medi-Cal գրասենյակի հետ՝ պարզելու համար, թե արդյոք կարող եք որակավորվել ատամնաբուժական ծառայությունների համար: Գտեք Ձեր տեղական վարչաշրջանի Medi-Cal գրասենյակի մասին տեղեկություններ՝ dhcs.ca.gov/COL հասցեով:
- Ձեր հղի լինելու մասին կամ այն մասին, որ Ձեր հղիության ավարտից հետո 12 ամիսների ընթացքում եք գտնվում, տեղեկացնելու համար դիմեք Ձեր տեղական վարչաշրջանի Medi-Cal գրասենյակի հետ:

- Դուք կպահպանեք Ձեր Medi-Cal-ի ատամնաբուժական նպաստները և կտեղափոխվեք Medi-Cal-ի ատամնաբուժական ծրագիր (fee-for-service)՝ Ձեր ատամնաբուժական ծառայությունների ամբողջական նպաստները ստանալու համար, եթե Դուք՝
 - Հղի եք կամ ծննդաբերությունից հետո մեկ տարվա ընթացքում եք (հղիությունից հետո) և/կամ
 - Խնամատար ընտանիքում ապրող երեխա/երիտասարդ եք կամ 26 տարեկանից փոքր խնամատար ընտանիքում նախկինում ապրող երիտասարդ, ով եղել է խնամակալության տակ 18-ամյակի օրը:

Ավելին իմացեք Medi-Cal-ի Ատամնաբուժական ծառայության մասին
 Փոփոխությունների ազդեցության տակ գտնվող ներգաղթային կարգավիճակների վերաբերյալ հարցերի պատասխանների համար կարդացեք Հաճախակի տրվող հարցերը (FAQ):

Օգտագործեք Ձեր սմարթֆոնը՝ սկանավորելու համար QR կոդը ստորև կամ այցելեք <https://www.dhcs.ca.gov/services/Pages/Medi-Cal-Dental-Benefit-Changes-Frequently-Asked-Questions.aspx> կայքէջ:



Լրացուցիչ օգնության համար.

- Զանգահարեք Medi-Cal-ի Ատամնաբուժական ծառայություններ Երկուշաբթի - ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան ժամը 5-ը (բացառությամբ նահանգային տոների)՝ **1-800-322-6384** հեռախոսահամարով: Զանգն անվճար է:
- Որակավորման, նպաստների և ծառայությունների վերաբերյալ հարցերով զանգահարեք Medi-Cal-ի օգնության գծին, երկուշաբթիից ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 5-ը (բացառությամբ նահանգային տոների)՝ **1-800-541-5555** հեռախոսահամարով: Զանգն անվճար է:
- Ձեր նպաստների օգտագործման և Ձեր իրավույքները հասկանալու հարցում օգնության համար էլ. նամակ ուղարկեք **MMCOmbudsmanOffice@dhcs.ca.gov** հասցեով: Կամ զանգահարեք **1-888-452-8609** (TTY՝ 711 California State Relay-ի համար), Երկուշաբթիից ուրբաթ, առավոտյան ժամը 8-ից

մինչև երեկոյան ժամը 5-ը, բացառությամբ նահանգային տոների: Զանգն անվճար է: Կամ այցելեք <https://www.dhcs.ca.gov/services/MH/Pages/mh-ombudsman.aspx> կայքէջ:

- Առողջության և ատամնաբուժական ծրագրերի ընտրության հարցում օգնության համար զանգահարեք Medi-Cal Health Care Options (HCO) երկուշաբթից ուրբաթ օրերին, առավոտյան ժամը 8-ից մինչև երեկոյան 6-ը **1-800-840-5032** (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով: Զանգն անվճար է: Կամ այցելեք Medi-Cal HCO-ի կայքը՝ **www.healthcareoptions.dhcs.ca.gov**:
- Ձեր ատամնաբուժական ծրագրի վերաբերյալ հարցերով զանգահարեք Ձեր Medi-Cal Ատամնաբուժական ծրագրի քարտի հակառակ երեսին նշված հեռախոսահամարով: Զանգն անվճար է:
- Medi-Cal-ի ծրագրի փոփոխությունների մասին ավելին իմանալու համար այցելեք <https://www.dhcs.ca.gov/Medi-Cal/Pages/changes.aspx> կայքէջ:
- Medi-Cal-ի ապահովագրության շրջանակի փոփոխությունների համար, որոնք հիմնված են ներգաղթային կարգավիճակի վրա, էլ. նամակ ուղարկեք **ImmigrationPolicy@dhcs.ca.gov** հասցեով:
- Ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակը գտնելու համար այցելեք՝ **dhcs.ca.gov/COL**:

Շնորհակալություն,

Department of Health Care Services